10.56653/18290361-2025.16-75

Աշոտ Հայկազուն Գրիգորյան
ճարտարապետության դոկտոր
Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
ashothaykazun@gmail.com

ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ՝ ԸՍՏ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ*

Հիմնաբառեր. արտերկիր, ճարտարապետ, ժառանգություն, թանգարան, պահպանություն, հանրահռչակում, մշակույթ

Ներածություն

Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի արխիվ պահոցի կարևորագույն մաս է կազմում «Արտերկրի հայ ճարտարապետներ»[1] անվան տակ գրանցված բաժինը: Այստեղ հավաքվել և հավաքվում են աշխարհի տարբեր հայ համայնքներում և երկրներում ապրած և ապրող հայ ճարտարապետների գործունեությանը վերաբերող տարատեսակ նյութեր: Թանգարանի արխիվի այս բաժինը ստեղծվել է 1990 թվականին (հարկ է նշել, որ մինչ այդ Հայաստանում չի եղել ճարտարապետության թանգարան և առավել ևս ճարտարապետական ժառանգությունը ամբարող արխիվ): Իհարկե հայ ճարտարվեստին վերաբերող որոշ նյութեր եղել են և կան Հայաստանի պետական արխիվում, տարբեր թանգարանների հավաքածուներում, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, անհատների մոտ, սակայն պարզ է, որ դրանք ամբողջական չեն:

Ճարտարապետության թանգարանի ստեղծումով այս գործընթացը նախ ամրագրվեց և կարևորվեց պետության կողմից և դարձավ թանգարանի աշխատակիցների ամենօրյա գործընթացի կարևոր մասերից մեկը:

Պատմական բարդ ճակատագրի թելադրանքով աշխարհի տարբեր անկյուններում ստեղծվել են գաղթօջախներ, հայկական համայնքներ, արտերկրի հայութ-

* Ստացվել է 25.07.2025թ., ուղարկվել է գրախոսության՝ 02.09.2025թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025թ:

[1] Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում հրատարակության է պատրաստվում «Արտերկրի հայ ճարտարապետները» հատորյակը, որտեղ ներկայացվելու են XIX–XXI դարերի արտերկրի հայ ճարտարապետների կարևորագույն ստեղծագործությունները իրենց փաստագրական և քննական հիմնավորումներով, ըստ տիպաբանական հաջորդականությամբ:

յուն և հայը գոյատևման ճանապարհին աշխատել է, ստեղծագործել կառուցել, շատ անգամ իր յուրաքանչյուր հորինվածքում փորձել պահպանել հայեցի մոտեցումը:

Այս գործընթացը դարերի պատմություն ունի, և այսօր հրատապ է դառնում ուսումնասիրել և գնահատել Արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործական ժառանգության դերը, մի կողմից տվյալ երկրի, մյուս կողմից հայ մշակույթի ընդհանուր համակարգում: Այսօր, օրինակ Ֆրանսիայում ապրում և գործում են ազգությամբ հայ ավելի քան 200 ճարտարապետներ և, իհարկե, հետաքրքիր է ճշտել և իմանալ նրանց կատարածի տեղը, դերն ու նշանակությունը ֆրանսիական մշակույթում, շինարվեստում, ճարտարապետությունում և այլն:

Հետաքրքիր է նաև պարզել թե արդյոք որևէ կապ կա այդ գործընթացի և հայ մշակույթի միջև, արդյոք այդ ճարտարապետները կրում են հայ մշակույթի հետքերը և ինչ ձևով է դա դրսևորվում նրանց ստեղծագործություններում, արդյոք, հնարավոր է գտնել համագործակցության ուղիներ արտերկրի ճարտարապետների հետ և այլն: Վերջ ի վերջո խնդրո առարկան ունի պատմա-տեսական, ճանաչողական, իմացաբանական նշանակություն:

Հայ մշակույթի և մասնավորապես հայ ճարտարապետության պատմությանը, տեսությանը և գործնականին վերաբերող հետազոտությունների ժամանակակից գործընթացից անհիմն դուրս են մնացել արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործությունների ուսումնասիրումը, դրանց գիտական արժևորումը, դրանք հայ մշակույթի ընդհանուր համակարգում դիտարկումը և այս ամենից հետևող բազմաթիվ այլ խնդիրներ:

Խորհրդային շրջանում արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործական ժառանգությանը վերաբերող նյութերը մեզ հասու չէին, այս էր թերևս հիմնական պատճառը, որ հայ մշակույթի այս կարևոր շերտը դուրս մնաց մեր մտավորականների տեսադաշտից:

Ճարտարապետության ազգային թանգարան ինստիտուտը փաստորեն առաջինն էր, որ պետականորեն և հետևողական սկսեց զբաղվել այս հարցով: Հանուն ճշմարտության պետք է խոստովանել, որ մեզանում միակ գիտնականը, որ քիչ թե շատ տեղյակ էր խնդրին և որոշ նյութեր էլ հասցրեց հրատարակել, երջանկահիշատակ դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանն էր: Մինչ Վարազդատ Հարությունյանի կողմից արտերկրի հայ ճարտարապետների գործունեությանն անդրադառնալը, 1967 թվականին ճարտարապետների տանը մեկ զեկուցում էր ներկայացվել այդ թեմայով, իսկ տարիներ անց դոկտոր, պրոֆեսոր Էդմոն Տիգրանյանի կողմից հրատարակվել էր Անդրկովկասում գործունեություն ծավալած հայ ճարտարապետների մասին ուշագրավ գիրքը (Տիգրանյան 2003): Արտերկրի հայ մտավորականներից խնդրին փորձել էր մոտենալ նշանավոր ճարտարապետ Փասկալ Փապուճեանը, որի գործը կիսատ էր մնացել տարբեր պատճառներով:

Թերևս սա էր հիմնական պատճառը, որ ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը, իր գիտահետազոտական աշխատանքների շրջանակը ընդլայնելով, հիմնավորեց և, պետական պատվեր ստանալով, իրականացրեց գի-

տական մի շարք թեմաներ՝ «Արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործական ժառանգության դերը հայ մշակույթում» ընդհանուր վերնագրով: Այս լայնածավալ հետազոտությունը բաժանվել էր մասերի, փուլերի, որի առաջին փուլը կոչվում էր «Իրանահայ ճարտարապետներ»: Հետագայում թեման շարունակվեց «Ֆրանսահայ…», «Մերձավոր և Միջին արևելքի երկրների…» և այլ թեմաների ուսումնասիրությամբ:

Հարկ է նշել, որ խորհրդային տարիներին, ըստ մեզանում հրատարակվող հանրագիտարանային տվյալների և հայ ժողովրդի պատմության, ինչպես նաև «Հայ սփյուռք» և այլ նյութերի, խոսքը գնում էր պոլսահայ Պալյանների, մի քանի պարսկահայ և այլ համայնքների հայ ճարտարապետների մասին, բնականաբար միայն թվարկումով, որը, ի դեպ, 10-ի չէր հասնում: Հայաստանի երրորդ հանրապետության շրջանում 2025 թվականի տվյալներով աշխարհասփյուռ հայ ճարտարապետների թվաքանակը չի անցնում 20-ից (ըստ «Հայոց պատմություն» հատորյակների՝ Բաքվում կային 7, Թուրքիայում՝ 6, Հայոց միջնադարում՝ 4 հայ ճարտարապետներ): Այն դեպքում երբ թանգարանի կողմից հավաքված, պահպանվող, ուսումնասիրվող, ցուցադրվող (այդ թվում և արտասահմանում) և անշուշտ հրատարակվող նյութերի հայ ճարտարապետների թվաքականը մի քանի հազար է (Գրիգորյան 2017; Գրիգորյան 2022; Grigoryan 2023):

Տարեցտարի շարունակաբար ընթացող հետազոտությունները, հավաքված հազարավոր նյութերի բաղդատումը նոր էջ բացեցին հայ ճարտարապետության պատմատեսական ուսումնասիրությունների գործընթացում: Մշակված նյութերը այսօր մեզ հնարավորություն են ընձեռում հետևել, որ սփյուռքի գաղթօջախներում եղել են և կան հայ ճարտարապետներ, որոնց ստեղծագործական ժառանգությունը արժանի է հետևողական և հիմնարար ուսումնասիրության:

Հետազոտության արդյունքում պարզվեց, որ ավելի քան հարյուր տարվա կտրվածքով հայ ճարտարապետները նպաստել են այս կամ այն երկրի, կամ համամարդկային ճարտարապետաքաղաքաշինական գործընթացի կայացմանը; Նախագծել և կառուցել են այնպիսի հորինվածքներ, որոնցից շատերը մնայուն միջավայրաստեղծ արժեքներ են դարձել:

Արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործությունների մասին մեր անտեղյակության նման իրավիճակը փաստորեն նսեմացրել, խաթարել է ճարտարապետության մասին մեր պատկերացումները, հայ ճարտարապետական միտքը, աղքատացրել ճարտարվեստը ընդհանրապես: Ցավոք, այս միտումը այսօր էլ հիմնականում շարունակվում է, չնայած արդեն նկատվում են համագործակցության առաջին քայլերը, նախագծային և շինարարական ծրագրերում:

Այսօր անքննելի հիմքեր ունենք փաստելու և գնահատելու, ամբողջացնելու հայ ճարտարապետների ներդրումը հայ և համամարդկային ճարտարապետական, քաղաքաշինական, մասնագիտական, կրթական, գիտական, հասարակական ոլորտներում:

Դրանք հիմնականում ներկայացնում են այն երկրները, որտեղ եղել են և կան հայ գաղթօջախներ և այն երկրները, որտեղ համագործակցաբար աշխատել են հայ ճարտարապետներն ու շինարարները:

Արտերկրի յուրաքանչյուր հայ համայնքում ժամանակ առ ժամանակ գործած և գործող հայ ճարտարապետներից առանձնանում են Իրանի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, Կիպրոսի, Եգիպտոսի, Հունաստանի, Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Արգենտինայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և այլ երկրների ազգային համայնքների հայ ճարտարապետները: Նրանց թե՛ քանակական և թե՛ որակական հատկանիշները շոշափելի են, իսկ նրանց թողած ժառանգությունը՝ հետաքրքիր, ուսանելի և մնայուն: Արտերկիրը տվել է այնպիսի հայ ճարտարապետներ, որոնց անունները հարգանքի, երախտիքի ու հպարտանալու առիթ են տալիս ոչ միայն հայերիս՝ Սինան, Պալյան գերդաստան, Գ. Գևրեկյան, Պ. Ջոբյան, Լ. Նաֆիլյան, Ա. Կարինյան, Փ. Փափուճեան, Ս. Փիլավյան, Փ. Գալանճյան, Լ. Կուրեղյան, Ա. Բերքյան, Է. Սարգսյան, Գ. Պալդուպետրոսյան, Ա. Փուլդոկյան, Հ. Սարաֆ, Յու. Գրիգորյանց, Ռ. Ալթն, Մ. Աթայանց, Միշել Մովսիսիան և այլն:

Որոշ երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Իրան) հայ ճարտարապետները ստեղծել են միություններ, օրինակ Իրանում գործում է հայ ճարտարապետների և ճարտարագետների միությունը, Թուրքիայում՝ «Հայճար» միությունը, Կանադայում՝ «Կամար» միությունը և այլն (այս միությունների հետ թանգարանը սերտ կապերի մեջ է):

Ներակայացված պայմանական (նկ. 1) սխեմայից, որը անշուշտ վերջնական չէ, պարզ է դառնում, որ այսօր աշխարհի 33 երկրներում ունենք ավելի քան 3000 ճարտարապետներ: Սակայն հարկ է նշել, որ հայ ճարտարապետների նախագծերով կառուցված շենքերն ու շինությունները բնականաբար շատ ավելին են և տարածված են աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

Ստորև ներկայացվող պատկերներից (նկ. 1–10) կարող ենք հետևել, որ հայ ճարտարապետները ստեղծագործում են ճարտարվեստի բոլոր բնագավառներում:

Ներկայացվածները ընդամենը մի ոչ մեծ հատվածն են այն հզոր ճարտարապետական ներուժի, որ ունեցել և ունենք արտերկրում:

Նյութերից պարզ է դառնում, որ հայ ճարտարապետները ստեղծագործում են ճարտարվեստի տիպաբանական ողջ տիրույթում, քաղաքաշինություն, բնակելի և հասարակական շենքեր և կառույցներ, դենդրոլոգիա, ինտերիեր և էքստերիեր, կանաչ ճարտարապետություն, արդյունաբերական և ռազմական համալիրներ, ճարտարապետական փոքր ձևեր և այլն:

Այսօր էլ դժվար է ֆիքսել հայ ճարտարապետների ընդհանուր թվաքանակը աշխարհում: Նրանցից շատերը տարբեր պատճառներով ստիպված են լինում թողնել այս կամ այն երկիրը և տեղափոխվել այլ երկրներ՝ ապրելու և ստեղծագործելու: Բացի այս աշխարհի տարբեր բուհեր ամեն տարի ավարտում են բազմաթիվ երիտասարդ հայ ճարտարապետներ և ակտիվորեն ինտեգրվում ճարտարվեստ:

Շատ հայ ճարտարապետներ, ապրելով մի երկրում, ստեղծագործում են այլ երկրներում: Այստեղից հետևում է, որ արտերկրի հայ ճարտարապետների մասին նյութեր հավաքելու, դրանք ուսումնասիրելու, գիտական և գործնական կյանքում

ներդնելու համար աշխատանքները շարունակական են լինելու և միշտ հանդիպելու են մի շարք դժվարությունների և խնդիրների, որոնցից են՝

1. Հայ ճարտարապետների սփռված լինելը աշխարհով մեկ,
2. Նրանցից շատերի հայերեն չիմանալը,
3. Նրանց իրավական կարգավիճակը տվյալ երկրի օրենսդրական դաշտում, դրանցից բխող տարաբնույթ խոչընդոտներով,
4. Հաղորդակցության կապի բարդությունները,
5. Հայաստան-սփյուռք հարաբերությունների հարափոփոխ իրավիճակը,
6. Թանգարանի աշխատակիցների միջազգային փորձի ոչ բավարար վիճակը,
7. Գործի կարգավորման ֆինանսական բավարար միջոցների բացակայությունը (այդ թվում արխիվային նյութերի Հայաստան տեղափոխման հետ կապված ծախսեր և այլն):

Եզրակացություն

Հավաքված և հետազոտված նյութերը, մի շարք գործող ճարտարապետների հետ գործնական կապերի հաստատումը թույլ են տալիս եզրահանգել, որ այսօր անհրաժեշտ է արտերկրի հայ ճարտարապետներին վերաբերող նյութերը հավաքել, պահպանել, ուսումնասիրել և հրատարակել, նրանց ներգրավել Հայաստանի ոլորտին առնչվող նորմատիվային ակտերի մշակման, նախագծային, գիտական, կրթական, շինարարական և նոր տեխնոլոգիաների ներդրման աշխատանքային գործընթացներում, ճշտել արտերկրի հայ ճարտարապետների, շինարարների, ոլորտում արտադրողների, պոտենցիալ հնարավորությունները, նրանց ժառանգության իրական պատկերը, կուտակած փորձը, կրթության, գիտության, նախագծային, շինարարական բնագավառներում և, որ շատ ավելի կարևոր է, դրանց Հայաստանում ներդրման և համագործակցության փոխշահավետ և գործնական կապերի և ուղիների որոնումն ու հաստատումը:

Այսօր օրվա հրամայականն է դառնում արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործական ժառանգությունը դիտարկել որպես հայ մշակույթի ընդհանուր ժառանգության անբաժանելի և կարևոր մաս, հրատարակել և դրանով իսկ գիտական շրջանառության հանձնել նրանց ժառանգությունը, որն արժանի է հիմնարար և հետևողական հետազոտության:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Ալ. թ. ՃԱԹԻ – Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ

ԳԱ – Գիտությունների ակադեմիա

Նկ. – նկար

ՀՍՀ – Հայաստանի սովետական հանրագիտարան

ՀՍՍՀ – Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

10-ամեակ, Հայ ճարտարապետների և ճարտարագետների միություն, Թեհրան, 1996:

Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի (Ալ. թ. ՃԱԹԻ) ֆոնդարանի նյութեր:

Հայկական սովետական հանրագիտարան, 12 հատորով, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1974–1986:

Սովետական Հայաստան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, ՀՍՀ գլխավոր խմբագրություն, 1987:

Հայկական համառոտ հանրագիտարան, 4 հատորով, Երևան, Հայկական խորհրդային հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1990–2003 (այստեղ արդեն XIX և XX դարերի մի շարք հայ ճարտարապետների մասին կան հակիրճ կենսագրականներ):

Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:

Ո՞վ ո՞վ է, հայեր, կենսագրական հանրագիտարան, 2 հատորով, Երևան, Հայկական հանրագիտարանի հրատարակչություն, 2005–2007:

Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, Պատմության ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970–1984:

ALTOUNIAN 1999 – Altounian A.M., *Ala recherche du terns relrouve avce man pere M.H.Altounian*, Beyrouth, Liban, 1999:

Ուսումնասիրություններ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2017 – Գրիգորյան Ա.Հ., *Հայոց ազգին պարտեզի գանձերը՝ Պալյաններ*, Երևան, «Զանգակ-97», 2017:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2022 – Գրիգորյան Ա.Հ., *Վիլլա Արարատի նահապետը. Լևոն Կուրեղեան*, Երևան, «Անտենոր», 2022:

ՏԻԳՐԱՆՅԱՆ 2003 – Տիգրանյան Է., *Հայ ճարտարապետների գործունեությունը անդրկովկասում XIX դարի վերջ–XX դարի սկիզբ*, Երևան, «Ոսկան Երևանցի», 2003:

GRIGORYAN 2023 – Grigoryan A.H., *Ic ve dis mimaride BalyanLar zengin ermeni mimari bahcesinden bir demet*, Istambul, 2023:

Ashot Haykazun Grigoryan

Doctor of Architecture

Alexander Tamanyan National Museum-Institute of Architecture
National University of Architecture and Construction of Armenia

ashothaykazun@gmail.com

A NUMBER OF ISSUES OF THE PRESERVATION AND STUDY OF THE CREATIVE HERITAGE OF ARMENIAN ARCHITECTS ABROAD ACCORDING TO THE COLLECTION OF THE ALEXANDER TAMANYAN NATIONAL MUSEUM-INSTITUTE OF ARCHITECTURE

Keywords: abroad, architect, heritage, museum, preservation, popularization, culture

The most important part of the archive of the Alexander Tamanyan National Museum-Institute of Architecture is the section "Armenian Architects Abroad". It contains and collects various materials related to the activities of Armenian architects who lived and live in various Armenian communities and countries of the world. This section of the museum archive was created in 1990.

With the creation of the Museum of Architecture, this process received state consolidation and recognition for the first time, becoming one of the important parts of the daily work of the museum staff.

The collected and studied materials, the establishment of business contacts with a number of active architects allow us to conclude that today it is necessary to collect, preserve, study, and publish materials related to Armenian architects abroad. To involve them in the sphere of developing regulatory acts for design, construction and the introduction of new technologies in Armenia. To find out the potential of Armenian architects, builders and manufacturers abroad, the real picture of their heritage, accumulated experience in the fields of education, science, design and construction, and, what is much more important, to seek and establish mutually beneficial and practical connections, as well as ways of their investment and cooperation in Armenia. Today, it is becoming extremely important to promote the creative heritage of Armenian architects abroad as an integral and important part of the common heritage of Armenian culture, to publish their heritage and, thereby, introduce it into scientific circulation, worthy of fundamental and consistent research.

Ашот Айказун Григорян
доктор архитектуры
Национальный Музей-институт архитектуры имени Александра Таманяна
Национальный университет архитектуры и строительства Армении
ashothaykazun@gmail.com

ВОПРОСЫ СОХРАНЕНИЯ И ИЗУЧЕНИЯ ТВОРЧЕСКОГО НАСЛЕДИЯ АРМЯНСКИХ АРХИТЕКТОРОВ ЗА РУБЕЖОМ ПО МАТЕРИАЛАМ КОЛЛЕКЦИИ НАЦИОНАЛЬНОГО МУЗЕЯ-ИНСТИТУТА АРХИТЕКТУРЫ ИМЕНИ АЛЕКСАНДРА ТАМАНЯНА

Ключевые слова: армянская диаспора, архитектор, наследие, музей, сохранение, популяризация, культура

Важнейшей частью архива Национального музея-института архитектуры имени Александра Таманяна является раздел «Армянские архитекторы за рубежом». Здесь собраны и собираются разнообразные материалы, связанные с деятельностью армянских архитекторов, живших и проживающих в различных армянских общинах и странах мира. Этот раздел архива музея был создан в 1990 году.

С созданием Музея архитектуры этот процесс впервые получил государственное закрепление и признание, став одной из важных частей повседневной работы сотрудников музея.

Собранные и исследованные материалы, установление деловых контактов с рядом действующими архитекторами позволяют делать вывод о том, что сегодня необходимо собирать, сохранять, изучать и публиковать материалы, связанные с армянскими архитекторами за рубежом. Вовлекать их в сферу разработки нормативных актов проектирования, строительства и внедрения новых технологий в Армении. Выяснять потенциальные возможности армянских архитекторов, строителей и производителей за рубежом, реальную картину их наследия, накопленного опыта в сферах образования, науки, проектирования и строительства, и, что гораздо важнее, искать и устанавливать взаимовыгодные и практические связи, а также пути их инвестирования и сотрудничества в Армении.

Сегодня становится крайне важным пропагандировать творческое наследие армянских архитекторов за рубежом как неотъемлемую и важную часть общего наследия армянской культуры, публиковать и тем самым внедрять в научный оборот их наследие, достойное фундаментального и последовательного исследования.